

ՀԱՍՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԱՄԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Նոր Ամանոս համայնքի
զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման
խորհրդակցական
մարմնի » կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Վահրամ Ավետիսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 26.12.2016թ. թիվ 20 որոշմամբ

ՆՈՐ ԱՄԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔ 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	Ошибка! Закладка не определена.
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	6
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	Ошибка! Закладка не определена.
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	9
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	10
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	10
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	11
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	18
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	19

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի ընթերցող՝ Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Նոր Ամանոս համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ ՀՀԶԾ), որը մշակվել է հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքով սահմանված լիազորությունները և իրավասությունները, ինչպես նաև այլ իրավական ակտեր :

ՀՀԶԾ մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել համայնքի ֆինանսական կարողությունը, համայնքում առկա զարգացման դրական միտումները, ինչպես նաև համայնքում առկա խնդիրները և վտանգները:

Մեր նպատակն է համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման կենտրոն, համայնքում զարգացնել անասնապահությունը՝ տարեցտարի ավելացնելով անասնազխաքանակը, կաթի և մսի քանակի և որակի բարձրացումը, զարգացնել այգեգործությունը և պտղաբուծությունը՝ ստեղծելով նախադրյալներ ավելի մեծ թվով շահառուների ընդգրկել նշված ոլորտներում: Համայնքում առկա են համապատասխան նախադրյալներ զարգացնել թեթև արդյունաբերությունը՝ հիմնելով տրիկոտաժի մասնաձյուղ :

Միաժամանակ համայնքի զարգացման և առաջընթացի համար գերակա խնդիր է հանդիսանում նաև ոռոգման համակարգի և ջրի անբավարար վիճակը, որի արդյունքում չեն մշակվում գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ կամ մշակվում են ոչ լիարժեք:

Հիմնական խնդիրներից կարելի է նշել նաև արտադրված ապրանքի սպառման խնդիրը, որը կապված է համայնքը մայրուղուց հեռու գտնվելու և պահանջարկի բացակայությամբ :

Համայնքի զարգացման համար խոչընդոտ է նաև համայնքի ոչ գազաֆիկացված լինելը՝ իր հետ բերելով նոր խնդիրներ:

Վերը նշված խնդիրների արդյունքում խոչընդոտներ են առաջանում համայնքի սոցիալ – տնտեսական վիճակի բարելավմանը, բնակչության բնական աճի, մշակութային կյանքի զարգացման հարցերում:

Հաշվի առնելով այն փաստը, որ համայնքը փոքր է իր բնակչությամբ և ֆինանսական կարողություններով, որի արդյունքում համայնքը իր միջոցներով ի վիճակի չէ իրականացնել իրեն վերապահված լիազորությունները ամբողջ ծավալով, որի պատճառով համայնքի զարգացման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է համախմբվածություն, հետևողականություն, ֆինանսական և ռեսուրսային միջոցների ձիշտ և արդյունավետ օգտագործում, ինչն էլ կհանգեցնի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանների բարելավվմանը :

Հմայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի այն համահունչ լինի ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և առանձին կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնումով՝ ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցությամբ, դրանց լուծումներին հասնելու համար:

Նոր Ամանոս համայնքի ղեկավար Վ.Ավետիսյան

2, Համայնքի իրավիճակի նկարագրություն

2,1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Նոր Ամանոս համայնքը գտնվում է **ՀՀ** Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 37 կմ հարավ- արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է՝ 1040 մ և վարչական տարածքը կազմում է 3597.99 հա:

Ամանոս- բառի ծագումնաբանությունը կապվում է Տավրոս լեռնաշղթայում Ամանոս լեռան հետ:


Նոր Ամանոս համայնքը հիմնադրվել է 1970-ական թվականներին և Խորհրդային տարիներին նաև ճանաչված է եղել որպես *Թիվ 2 սովխոզ: Համայնքը բնակեցված է հանրապետության տարբեր շրջաններից , ինչպես նաև Վրաստանի հանրապետության հայաբնակ շրջաններից տեղափոխված բնակիչներով:*

Համայնքում առկա է նաև 1988-1991թթ-ընթացքում խորհրդային Ադրբեջանից տեղահանված բնակիչներ:

Ըստ Հայաստանի Հանրապետության **2011** թվականի մարդահամարի՝ Նոր Ամանոսի մշտական բնակչությունը **753**, իսկ 2016թ հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչությունը կազմում է 779 մարդ, որից 773 ազգությամբ հայ, 1 ռուս և 5 եզդի:

Բնակչությունը ըստ սեռա-տարիքային կազմի՝

- Մինչև 6 տարեկան 46 մարդ.՝ որից 25 իգական. 21 արական
- 7-ից մինչև 18 տարեկան.....82 մարդ.՝ որից 36 իգական. 46 արական
- 19-ից մինչև 63 տարեկան.....622 մարդ.՝ որից 312 իգական. 310 արական
- 63 և ավելի տարիքի.....29 մարդ.՝ որից 15 իգական. 14 արական



Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

Համայնքն ունի 1- մանկապարտեզ(չի գործում), 1- մշակույթի տուն(գործում է մասնակի) և միջնակարգ դպրոց , որում սովորում են 86 աշակերտ:Դպրոցի աշխատակազմը 32 աշխատակից՝ այդ թվում 22 մանկավարժ:

Դպրոցի մասնաշենքերից մեկում գործում է դպրոցահեն նախակրթարան, որտեղ հաճախում են 14 սաներ:

Համայնքում վերջին տարիներն նկատվում է բնակչության աճ,որը կապված է ծնելիության մակարդակի բարձրացմամբ, մասնավորապես 2015թ-ին ծնունդների թիվը կազմում է 10 նորածին, իսկ 2016թ-ին 25 նորածին:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը


- Նոր ամանոս համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 17939.7 հազ դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտներ կազմում են 3511.9 հազ դրամ կամ ընդհանուր տարեկան եկամուտների 19.6%
- Համայնքի տարածքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան:
- Համայնքում գրանցված և գործում են թվով երկու տնտեսվարող սյուբեկտներ , որոնք իրականացնում են առևտրային գործունեություն՝ հիմնական առաջին սպառման առարկաների վաճառք: ,
- համայնքի բնակիչները հիմնական զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Մասնատրապես՝


ցորենի , գարու և առվույտի մշակությամբ

Բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությամբ


Խաղողի և այլ պտղղների արտադրությամբ



Սանդղակ 3



Սանդղակ 4



- Համայնքում առկա է մեկ պատմա- մշակութային հուշարձան ,որի հիմնադրման տարեթիվը անհայտ է, սակայն տեղեկություններ կան , որ այն ծառայել է որպես քարվանսարա:
- Համայնքն ունի 1- մանկապարտեզ(չի գործում), 1- մշակույթի տուն(գործում է մասնակի) և միջնակարգ դպրոց նախատեսված 800 աշակերտի համար, որում սովորում են 86 աշակերտ: Դպրոցի մասնաշենքերից մեկում գործում է դպրոցահեն նախակրթարան՝ որտեղ հաճախում են 14 սաներ:
- Համայնքում առողջապահական հիմնարկ չկա,համայնքապետարանի շենքի տարածքից համայնքապետի որոշմամբ 25քմ հատկացվել է համայնքի բուժքրոջը ' համապատասխան ծառայություն մատուցելու համար:Այցելուների թիվը տարվա ընթացքում կազմում է 120 մարդ:
- ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը 2016թ-ի համար կազմել է 31 ընտանիք,
- գործազրկության մակարդակ համայնքում կազմում է 50%:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

- համայնք -պետություն համագործակցության շրջանակներում ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից համայնքում իրականացվել է ջրարբիացում, իսկ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է նաև գյուղ. տեխնիկայի ձեռքբերման ծրագրեր և գյուղատնտեսական տարբեր միջոցառումներ:
- հարևան համայնքների հետ համատեղ իրականացվում են միջհամայնքային ճանապարհների մաքրման ,պահպանման և բարելավվման ընդհանուր աշխատանքներ:
- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի տրամադրում՝ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում համայնքը ակնկալում է ոռոգման համակարգի վերանորոգում և բարելավվում ,մանկապարտեզի և մշակույթի տան շենքերի վերանորոգում: Նշված հարցերի կարգավորման հետ միասին կբարձրանա , և՛ համայնքի սոցիալական վիճակը ,և՛ դրական փոփոխություն կլինի մշակութային կյանքում:
- տեղացի բարերարների կողմից նախատեսվում է իրականացվող ծրագրերի շուրջ գյուղի սրբատեղի կառուցման ծրագիր, ինչը կամրապնդի հավատքի և համայնքի միասնության ամբողջականությանը:
- համայնքի վարչական տարածքում մասնավոր անձանց և ընկերությունների կողմից նախատեսվում է ներդնել գյուղ արտադրանքի(կաթ, միս, բանջարեղեն և այլն) վերամշակման արտադրամասեր, ինչպես նաև տրիկոտաժի փոքր ձեռնարկություն(առկա է համապատասխան տարածք և աշխատուժ):

Պետության հետ համագործակցության շրջանակներում՝ ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող գյուղ. տեխնիկայի ձեռքբերման ծրագրերը էականորեն դրական ազդեցություն կարող են ունենալ հողատարածքների արդյունավետ մշակման , որն էլ կարող է բերել անասնազվաքանակի և գյուղմթերքների արտադրանքի ավելացմանը:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),

Նոր ամանոս գյուղական համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է եկամուտների հետևյալ բյուջետային կառուցվածքը:

Անվանումը	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Հողի հարկ	2225,6	2225,6	2235,6	2240,6	2300,0
Գույքահարկ	1367,8	1400,0	1500,0	1600,0	1800,0
Տեղ, տուրքեր և վճ,	20,0	40,0	60,0	150,0	200,0
Գույքի վարձավճ,	600,0	750,0	760,0	760,0	800,0
Համահարթ, դուր,	13135,4	14205,0	15000,0	16000,0	17000,0
Այլ դուրացիա	---	-----	300,0	----	----
Այլ եկամուտներ	500,0	1329,4	2000,0	2000,0	1500,0
Ընդամենը	17848,8	19950,0	21855,6	22750,6	23600,0

Նոր ամանոս գյուղական համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է հետևյալ բյուջետային ծախսային ուղղությունները

Անվանումը	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Ապա, պահպ, ծախսեր	14196,3	14500,0	13200,0	13205,0	13220,0
Աղքատիքներին	400,0	450,0	500,0	600,0	600,0
Քաղ. Պաշտպանություն	200,0	200,0	250,0	300,0	300,0
Կոմունալ ծառայություն	1352,5	800,0	1000,0	1200,0	1200,0
Մշակույթ	---	500,0	1605,6	2000,0	2200,0
Կրթություն	---	1000,0	1500,0	2000,0	2000,0
Սոց ապահովություն	1700,0	2000,0	2300,0	2500,0	3000,0
Այլ ծախսեր	-----	500,0	1500,0	945,6	1080,0

Ընդամենը	17848,8	19950,0	21855,6	22750,6	23600,0
----------	---------	---------	---------	---------	---------

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

- Համայնքի ուժեղ կողմեր՝
 1. Աշխատուժի առկայություն
 2. Համայնքի աշխարհագրական դիրքը, որը գտնվում է Արարատյան դաշտավայրի նախալեռնային գոտում
 3. Հողերի բերրիություն
 4. Անասնապահության զարգացման հնարավորություն՝
 5. Մեղվաբուծության զարգացման հնարավորություն
 6. Համայնքի բնակիչների համախմբվածությունը
- Համայնքի թույլ կողմեր՝
 1. Ոռոգման ջրի անբավարար վիճակը
 2. Համայնքի ոչ գազաֆիկացված լինելը
 3. Մայրուղուց հեռու գտնվելը
 4. Համայնքի անապահով ընտանիքների թիվը
 5. Գյուղատնտեսական տեխնիկայի պակաս
 6. Սպորտի և ժամանցային կենտրոնների բացակայությունը
 7. Գյուղատնտեսական հողերի մշակման ոչ բավարար վիճակը
 8. Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը
- Հնարավորություններ՝
 1. Գյուղատնտեսական մթերքների արտադրանք
 2. Տրիկոտաժի արտադրության համար շենքի առկայություն
 3. Կաթի վերամշակման արտադրամաս՝ շենքի առկայություն
 4. Արտադրանքի առկայության դեպքում՝ աշխատուժի բավարար քանակ
 5. Զերմոցային համակարգի հիմնում
- 6. Կուլտուրայի տան վերանորոգումը ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը
- 7.
- Սպառնալիքներ՝
 1. ԱԷԿ –ին մոտ գտնվելը
 2. Քամիներ
 3. Կարկուտ
 4. Ցրտահարություններ
 5. Տևական երաշտներ
 6. Ոռոգման ջրի բացակայությունը վտանգում է համայնքում հողագործությամբ զբաղվելուն, որը նպաստում է գյուղատնտեսության ոչ ինտենսիվ զարգացմանը, ինչն էլ նպաստում է երիտասարդների արտագաղթին, արտերկրյան աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությանը:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարելավել ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող: Նոր Ամանոս համայնքի ՀՀԶԾ-ի իրականացման արդյունքում, առաջիկա հինգ տարիների ընթացքում կբարելավվի համայնքի բնակիչների սոցիալ – տնտեսական վիճակը, բնակչությունը կունենա իր ներդրումը ինչպես համայնքի զարգացման համար, այնպես էլ խթան կհանդիսանա պետության առաջընթացի համար, կբարձրանա բնակչության կուլտուր – կենցաղային պայմանները, արդյունքում բնակչությունը կմասնակցի համայնքի մշակութային կյանքի զարգացմանը, ինչպես նաև նախատեսված ծրագրերի օգնությամբ բնակիչը ավելի շատ կկապվի հայրենի հողի հետ և կշենացնի հայրենի օջախները:

Ելնելով Նոր Ամանոս համայնքի աշխարհագրական դիրքից, հողերի կարգավիճակից կարելի է համայնքի առաջնահերթ զարգացման ուղղությունը համարել գյուղատնտեսությունը՝ տարեցտար ավելացնել անասնազվաթիվը և բանջար- բուսականային կուլտուրաների արտադրման ծավալները: Միջոցներ ձեռնարկել համայնքում վերականգնել այգեգործությունը և պտղաբուծությունը: Համայնքում 1990-ական թվականների սկզբներին գործել է սպորտային կոշիկների արտադրամաս, ինչի արդյունքում այսօր ունենք համապատասխան և տարածք և ներուժ կազմակերպելու թեթև արդյունաբերության զարգացում, ինչը ոչ միայն կբարելավվի համայնքի բնակիչների սոցիալ – տնտեսական վիճակը, այլ կապ կապահովի հարակից համայնքերի հետ զարգացումը և արդյունավետ շփումը ավելացնելու համար:

համայնքի կայուն զարգացման պարտադիր ցուցանիշներն են՝

- Նոր Ամանոս համայնքի աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կազմում է 65 տոկոս, ինչը կապված է ոռոգման ջրի և աշխատատեղերի բացակայության հետ: Նշված խնդիրների կարգավորման ընթացքում այն կարող է նվազել՝ հասնելով մինչև 30 տոկոս:
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը զարգացման ցուցանիշների արդյունքում կկազմի 19 տոկոս:
- Համայնքում գրանցված բնակիչների թիվը չպայմանավորված բնական աճով՝ նախորդ տարվա համեմատ, կազմում է 1,2 տոկոս: Սակայն կարելի է վստահ ասել, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման արդյունքում տվյալ ցուցանիշը կբարձրանա:
- Առաջիկա տարիների ընթացքում կավելանա նաև անասնազվաթիվը՝ կապված խնդիրների կարգավորման արդյունավետությունից, խոտհարքների և արոտավայրերի նպատակային օգտագործումից:

- Նոր Ամանոս համայնքի զարգացման համար կարևոր նախապայմաններից է ռոռզման համակարգի կապիտալ վերանորոգումը ,որի վատթար վիճակի պատճառով ջրի կորուստը կազմում է 50 – 60 տոկոս: Նշենք,որ նշված խնդիրը կապված է Արզնի – Շամիրամ (Կոշ- Նոր Ամանոս) հատվածի ջրատարի հետ : Խնդիրը կարգավորելու համար անհրաժեշտ է կառուցել նոր ջրագիծ՝ փակ համակարգով,որի երկարությունը կազմում է վեց կիլոմետր `400 լիտր/վարկյան խողովակով:

Անհրաժեշտ գումարը կազմում է 180 միլ դրամ :Վերանորոգելուց հետո համայնքում ավելի շատ շահառուներ կներգրավվեն գյուղատնտեսության մեջ և կընդլայնվի մշակման համար առկա հողատարածքներ : Տվյալ տարածքում առկա է 225 հա գյուղնշանակության հողեր,որից մշակվում է ոչ լիարժեք 125 հա,իսկ 100 հա չի մշակվում:Վերանորոգելուց հետո առկա հողերը կսկսեն կրկին մշակվել: Կից ներկայացնում ենք ծրագրի անձնագիրը

«ՈՒՌԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

(անձնագրի գումարները նախատեսված են հազար/դրամով)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ոռոգման համակարգի վերանորոգում՝ հողերի լրիվ լիարժեք մշակում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			30000:0	900000,0	30000,0	30000,0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			15000,0	45000,0	15000,0	15000,0	
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			15000,0	45000,0	15000,0	15000,0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.						

	1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝40000,0 Կապիտալ ծախսեր՝140000,0 Ընդհանուր բյուջեն՝180000,0
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետական բյուջեից
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2017- 31.12.2020
Ծրագրի համառոտ նկարագրություն	6 կլիմոտներ երկարության խողովակները շահագործելուց հետո հողերի մշակությունը կավելանա՝225 հա հողատարածք կմշակվի

- Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում: Նոր Ամանոս համայնքը ունի կոոպերատիվ, կոոպերատիվի համար ԳՆ ԾԻԳ-ի կողմից կտրվի տեխնիկա: Տեխնիկայի ձեռք բերման համար անհրաժեշտ է 54 միլ դրամ ,որից կոոպերատիվի ներդրումը 9 միլ դրամ է,իսկ ԾԻԳ-ի կողմից 45 միլ :

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Գյուղատեխնիկայի ձեռքբերում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը		Մատչելի ձևով հողերի մշակում					
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			10000	10000	20000	14000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			5000	5000	10000	7000	
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			5000	5000	1000	7000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000 Կապիտալ ծախսեր՝ 52000 Ընդհանուր բյուջեն՝ 54000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Կոոպերատիվ 9 միլ ,իսկ պետության կողմից 45 միլ						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Կոոպերատիվի անդամներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 - 2020						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գյուղտեխնիկայի ձեռքբերում						

- Համայնքի կարևորագույն խնդիրներից է նաև դաշտամիջյան ոռոգման ցանցի վերանորոգումը, ինչը 1985 մինչ այսօր չի վերանորոգվել, որի հետևանքով ջրի կորուստը կազմում է 40 – 50 տոկոս: Այդ ոռոգման համազարգից սնուցվում է 225 հա գյուղատնտեսական նշանակության հողերը, սակայն այժմ ոչ բավարար ջրի և վատթար համակարգի պատճառով մշակվում է 125 հա, այն էլ մասնակի: Նշված վերանորոգման հատվածը՝ ոռոգման ցանցի կազմում է 4 կմ : Նշենք նաև, որ վերը նշված 6 կմ (Արգնի-Շամիրամ հատվածի) ոռոգման համակարգից է սնուցվում դաշտամիջյան ոռոգման ցանցը: Կից ներկայացվում է ծրագրի անձնագիրը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Դաշտամիջյան ներքին ցանցի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Դաշտամիջյան ներքին ցանցի վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			25000	25000			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			13000	12000	100	100	100
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		12000	13000				
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 4000 Կապիտալ ծախսեր՝ 46000 Ընդհանուր բյուջեն՝ 50000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջե 10 տոկոս						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Հոդօգտագործողներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 -2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դաշտամիջյան ներքին ցանցի վերանորոգում , որի արդյունքում ռազիոնալ կօգտագոծվի 9րի առկայությունը : Դաշտամիջյան ոռոգման						

	համակարգը վերանորոգելուց հետո նախապայմաններ կավելանա ավելի շատ շահառուներ ընդգրկելու գյուղատնտեսական հողերի մշակման մեջ: Նշված հատվածում առկա է 225 հա գյուղնշանակության հողեր:
--	---

- Մշակութային կյանքը բարելավվելու համար անհրաժեշտ է նաև համայնքում անհրաժեշտ պայմանները կարգավորել : Առաջնային խնդիր է նաև մշակույթի տան շենքի վերանորոգում և նոր գույքի ձեռք բերում : Նշված խնդիրը կարգավորելու արդյունքում ակնկալվում է համայնքի բնակչության մշակութային կյանքի աշխուժացում և մասնակցությունը համայնքի բարգավաճմանը ու զարգացմանը : Մշակույթի շենքը կառուցվել է 1985 թվականին, սակայն մինչ ատ այսօր չի կատարվել վերանորոգում և տարիների ընթացքում շենքը գտնվում է անմխիթար վիճակում : Կից ներկայացվում է ծրագրի անձնագիր :

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Մշակույթի տան վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մշակութային կյանքի բարելավվում և զարգացում							
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
			35000	35000				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
			20000	15000				
	2.							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
			15000	20000				
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
		1.1.						
1.2.								
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ								
2.1.								
2.2.								
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 7000							

	Կապիտալ ծախսեր՝ 63000 Ընդհանուր բյուջեն՝ 70000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Գույք
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 – 2021
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մշակույթի տան շենքային պայմանները գտնվում են վատթար վիճակում: Կատարել մշակույթի տան հիմնական վերանորոգում և ձեռք բերել անհրաժեշտ գույք : Վերանորոգման արդյունքում հիմքեր կան զարգացնելու համայնքում մշակութային կյանքը և նոր սերունդին կապել համայնքի հետ :

- Համայնքում առկա է մսուր մանկապարտեզի շենք,որը կառուցվել է 1980-ական թվականների սկզբին, ընդհանուր մակերեսը կազմում է 1500մ/ք ,որը հիմնադրումից առ այսօր չի վերանորոգվել և կարիք կա կատարելու կապիտալ վերանորոգում : չվերանորոգվելու արդյունքում տարեցտարի ավելի է վատթարանում շենքային պայմանները : Հաշվի առնելով վերանորոգման համար անհրաժեշտ գումարի մեծությունը,նպատակահարմար է վերանորոգել առայժմ 500մ/ք(նշված տարածքը կազմված է երկու հարկից՝յուրաքանչյուրը 250մ/ք) տարածքը,ինչը նպատակ ունի առաջին հարկը օգտագործելու ,որպես հանդիսությունների սրահ՝ համայնքի բնակիչների համար,իսկ երկրորդ հարկը կօգտագործվի,որպես մսուր մանկապարտեզ: Կից ներկայացնում ենք ծրագրիի անձնագիրը :

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Մսուր մանկապարտեզի շենքի վերանորոգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ծրագիրը ուղղված է երեխանների դաստիարակությանը և կրթության հիմքերը ավելի ամուր դարձնելը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				10000	10000	3000	3500
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				5000	5000	1500	2000

	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				5000	5000	1500	1500
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 8500 Կապիտալ ծախսեր՝ 18000 Ընդհանուր բյուջեն՝ 26500						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Գույք						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինասական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի առկա բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018 - 2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մտուր մանկապարտեզի շենքի ընդհանուր տարածքը կազմում է 1500 մ/ք ,որը բաղկացած է երեք մասնաշենքից,առաջիկա ծրագրում նախատեսվում է կապիտալ վերանորոգել մեկ մասնաշենքը,ինչի արդյունքում այն կօգտագործվի համայնքի բնականոն կյանքը թեթևացնելուն և բարելավվելուն						

- Համայնքի հետագա զարգացման համար կարելի է նաև ընդգրկել հետևյալ ծրագրերը և միջոցառումները`
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում` անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
 - համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում
 - համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում` նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
 - համայնքում միջոցներ ձեռնարկել զարգացնելու այգեգործությունը և պտղաբուծությունը` հաշվի առնելով գյուղատնտեսական հողերի առկայությունը :

- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության պայմանների ընդլայնում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու սննդի առումներով),
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ խմելու ջրի ջրամատակարարման և ոռոգման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ միջնակարգ դպրոցի շենքի նորոգման, ներքին հարդարման, դռների և պատուհանների փոխարինման և ջեռուցման միջոցով
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (համայնքապետարան, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն հնարավոր է իրականացնել հետևյալ ֆինանսական միջոցներով՝

- Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ,
- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Այլ աղբյուրներ:

Համայնքի միջոցները լինելով սուղ , ակնկալիք կա ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը իրականացնել պետությունից, կազմակերպություններից և բարեգործությունից տրված միջոցներով և համայնքը պատրաստակամ է հնարավորությունների սահմաններում կատարել ներդրում ծրագրերի իրականացման համար:

5. ՀՀԶԾ մոնիթորինգ

Հստակ սահմանել, թե ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն ի՞նչ միջոցներով են ֆինանսավորվելու՝

- Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ,
- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Այլ աղբյուրներ:

Կարելի է նշել այն փաստը, որ Նոր Ամանոս համայնքում ԽՍՀՄ փլուզումից ի վեր չի իրականացվել որևէ լուրջ ներդրում,ինչը կիսթաներ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի և մշակութային կյանքի բարելավմանը: Համայնքում առկա է , և տարածք, և աշխատուժ ներդրումներ կատարելու տարբեր ոլորտներում,հատկապես գյուղատնտեսության և այգեգործության :ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար համայնքը չունի բավարար ֆինանսական միջոցներ,և ակնկալում է պետության կամ մասնավոր հատվածի կողմից ներդրումներ՝ ծրագրերը իրականացնելու համար: Եվ համայնքը պատրաստ է իր ուժերի սահմաններում ներդնել համապատասխան միջոցներ իրականացնելու և ավարտին հասցնելու ցանկացած ներդրման նպատակ: